իւղ, պանիր մատաղացու, ուջու*) և հոգեբաժին. այդ բաւական չէ, թեմը պարտական է ուղարկել ձրի մշակներ, որոնք վարեն, հնձեն վանքի արտերը։ Ես ինքս ականատես եմ եղել Լիմ-Անապատի մի ժողովարար վարդապետի բռնութեանը։ Գիւղացիք չէին կարողացել նորա պահանջած իւղի քանակութիւնը ամբողջապէս վճարել. հոգեսէր հայր սուրբը անիծելով գիւղական համայնքի ամբարշտութիւնը, եկեղեցոյ դուռը փակեց և բանալին գրպանը դնելով հեռացաւ։ Տարակոյս չը կայ որ մինչև գիւղացիք նշանակեալ իւղի պակասորդը չը լրացրին և քանի մի փութ էլ հայր սուրբի սիրտը և օրհնութիւնը առնելու համար չ'աւելացրին, եկեղեցու դուռը չը բացվեց։

Բացի այս վանքական պարտադիր տուրքերը, անպակաս են լինում միշտ պատահական ժողովարարութիւնները. օրինակ վանքի պարիսպը քանդվել է, կամ մի այլ վերանորոգութիւն պէտք է անել, այդ ամենը թեմականների պարքն

---

*) Ուջու նշանակում է կամաւոր տուրք։ Ուջուն եւ կողապուտը միայն սուրբ Կարապետի եւ Մշոյ Վանքերումը հաւաքելու սովորութիւն կայ։ Սուրբ Կարապետի վանքը ամենամեծ թէմն ունի, որ բաղկանում է 7 գաւառից. Նրա մատակարարում են 300 հոգի միաբանութիւն ունեցող վանքին մի տարումը երկու տարուայ ուտելեղինաց պաշար։